Ամենայն թղթակցութիւնք և վճարմունք պարտին ուղղուիլ առ խմբագրութիւն ։
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
(Ամէն երկրի համար)
Տարեկան 2 Թալեր
Մէկ թիւը 10 Սէնթ

All communications and subscribtions to be addressed to
DR. M. S. GABRIEL,
EDITOR OF THE "HAIK"
An Armenian fortnightly
Political and Hygienic.
202 W. 23ed ST., NEW YORK.
TERMS TO SUBSCRIBERS.
For all countries, One year $2.00
Single copy, ... $0.10

ՀԱՅՔ

ԿԻՍԱՄՍԵԱՅ
ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՒ ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

Editor—M. S. GABRIEL, M. D. Տէր-Խմբագիր—Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ
202 W. 23ed St., New York City, U. S. America.

Ա. ՏԱՐԻ — ՆԻՒ ԵՈՐՔ, ՓԵՏՐՎԱՐ 28 · 1891 · — ԹԻՒ 5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—Հայք.—Օսմանեան Պետութիւն եւ Սուլթան Համիտ Բ.—Չէյթուն առ Հայ գաղթականութիւնս.—Լարանտայի ազնուական Հայ եւ Հայուհի ի ԺԶ. Դարու.—Դաս մի ազգային վերջին անցքերէ.—Զինուոր Պատանի.—Ջուրըն իբր դարման.—Նամակ Կ. Պոլսէ.—Պուլկարական վայրագութիւնք եւ Հայկական վայրագութիւնք.—Թելադրեալ արհեստանոցն.—Նամակ Մանչեստրէն.

ՀԱՅՔ

The Manchester Examiner and Times *Անգղիական թերթն, որ Հայկ. դատին հնագոյն և ջերմագոյն պաշտպաններէն է, իւր էջերուն մէջ յաճախ կը խօսի ՀԱՅՔի վերայ. «ՀԱՅՔի մանաւոր կոչումն է, կ'ըսէ, արտաքոյ Թիւրքիոյ գտնուող Հայոց ճշմարիտ բերան հանդիսանալ..»*

Ուրիշ թուոյ մի մէջ ալ համառօտ վերլուծութիւնն տուած է «Օսմ. Պետութիւնն և Սուլթան Համիտ Բ.» խորագրով մեր յօդուածոյ առաջնոյն. ՀԱՅՔ ի բոլոր սրտէ շնորհակալ է xaminer and Times *ի համակրութեան այս բազմակրկնակ արտայայտութեանցն համար.*

L'Observateur Francais *լրագրին 14 Յունվարի թուոյն մէջ կը կարդանք հետեւեալ տողերն—«Այն հալածանքն զոր Սուլթան Համիտ կը ծանրացունէ Հայոց վերայ, ոչ միայն չնուաներ այլ և համակրութիւն կը վառեցունէ նոցա, և վերջապէս յառաջ պիտի բերէ բոլոր Հայ գաղթականութեանց պատուիրակներու այն ժողովն զոր վերջերս կը ջատագովէր Նիւ Եօրքի ՀԱՅՔն.»*

ՕՍՄԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆ ԵՒ ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ Բ.

Գ.

Սուլթան Ապտ-իւլ Համիտ Բ Օսմանեան Պետութեան ղեկին վարելու հասած է անոր տկարացեալ ժամանակամիջոցին, և որոշած է յանձն առնուլ երկրին կառավարութեան, ներքին և արտաքին աշխարհավարութեան ամբողջ պատասխանատուութիւնն. Ինքն է որ կը խորհի և անձամբ կը անօրինէ ամենայն ինչ և այսպէս ապրելով մասնաւորական չափազանց գործունէութեան մէջ կը պատնէ նախարարական դասուն քաղաքական և իմացական հեանքն. Ինչպէս որ Օսմանեան քաղաքագէտ դասուն բարձրագոյն կարողութիւնք կը մաշին իմացական ծուլութեան և անպատասխանատու գործունէութեան մէջ, նոյնպէս Օսմանեան բարձր և միջակեալ դասերուն կը պատահի վասն զի անձնական ազատ խորհուրդն բոլորովին արգիլուած է թէ մամլոյն թէ ընկերութեան մէջ. Հայքս չպարտիմք կարծել թէ միայն մեր Պատրիարքին և եկեղեցականաց խրատութիւններն սեղմել կուզէ Կայսրն, ինչ որ կ'ընէ մեղնկատմամբ, հետեւութիւնն է այն բացարձակութեան սկզբունքին որով նա կը վարէ իւր բովանդակ երկիրըն. Ո՛վ գիտէ թէ այդ դրութիւն ի՛նչ զայլեալ դժգոհութիւններ կը սնուցանէ Թիւրքաց բարձրագոյն դասերուն մէջ.

Թէ յերկիւղէ իւր թագին միայն Սուլթանն ընդունած է ծայրայեղ կեդրոնացուցման այս դրութիւն, որպէս կարծեն շատք, այնմ դժուար է հաւատալ. Նորին վեհափառութեան գործունէութիւնն ունի ինչ ինչ հանգամանք ցուցիչ հայրենասիրական հոգածութեանց, ուստի և մեք չեմք կրնար ժխտել նմա ամենայն բարձրագոյն կարգի իղձեր. Եւ մինչ կը գրեմք այս տողեր, այն հաւատով կը գրեմք թէ ճշմարտութիւնն հզօրագոյն է քան զբռնութիւն և զսուտ, և թէ մեր խոնարհ խորհրդածութիւնք կրնան, եթէ օրհնութիւն Այնմանէ որ Տէրն է Տէրութեանց, լինել իբրև ի վերուստ ծագեալ նշոյլ մի ի միտս վեհապետին մեր թշուառ հայրենեաց.

Մեր ջերմ բաղձանքն է այս յօդուածով փարատել այն թիւր գաղափար թէ Տաճկաստան չկրնար բարւոք կառավարիլ և մի հզօր ազգ լինիլ քանի որ հոն կան Թուրք, Հայ, Արաբ, Յոյն, Ասորի և այլ ցեղեր, Մահմետականներ Քրիստոնեայներ, Հրեաներ են. Զայն կամիմք ցուցնել թէ Տաճկաստան կրնայ բարեկարգ, գո՛հ, միաբան մէկ ազգ լինիլ տարբեր ցեղեր, լեզուներ և կրօններ պարունակելով հանդերձ.

Միթէ Զուիցերիան, ազգ գոհ և խաղաղ, կազմեալ չէ՞ Ֆրանսացիներէ, Գերմանացիներէ և Իտալացիներէ. միթէ անդ չկա՞ն բողոքականներ և պապականներ. միթէ անդ Ֆրանսերէն, Գերմաներէն և Իտալերէն լեզուներն պաշտօնական չե՞ն երկրին այն մասանց մէջ ուր այդ լեզուաց մին խօսող տարրն մեծամասնութիւն կը կազմէ. Եւ ո՞չ ապաքէն այդ երկրի այլացեղ և այլալեզու քանթօններն հայրենասիրական և ազգային այնպիսի եռանդեամբ և համերաշխ ոգւով իրարու կապուած գիրկընդխառն են

որպիսի դժուար է գտնել միացեալ և միալեզու երկրաց մէջ.

Նոյն երևոյթն կը տիրէ նաև Միացեալ Նահանգաց մէջ. Հիւսիսէն և հարաւէն, արևելքէն և արևմուտքէն կուգան մարդիկ իրենց ազգային լեզուաւ, իրենց ցեղին բարուքն և քաղաքին սովորութեամբք, իրենց կրօնական և քաղաքական համոզմամբք և նախապաշարմամբք, և կը լեցուին այս երկրին մէջ. Եւ ի՞նչ է արդիւնքն այս խառնուրդին. Բաբելոնեան խառնակութիւն և դժոխային ժխո՞ր. Ո՛չ, այլ կարգ և խաղաղութիւն զարմանալի, ոչ ոքյապատմութիւն կը մոռաբերէ, և ոչ իսկ կը գանգատի ոք կառավարութենէն.

Արդ, կը հարցնենք, ի՞նչ է այն որ Զուիցերիոյ և Միացեալ Նահանգաց մէջ զանազան ցեղերն եւ լեզուներն դիւթութեամբ իմն հաշտ եւ սիրայօժ կը գործէ. Գաղտնիք մի չէ այն. ԱԶԱՏՈՒԹԻՒՆՆ եւ ՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆՆ է որ կը գործէ այդ առերևոյթ հրաշք. Այս երկու երկրաց մէջ ամէն քաղաքացի, փոյթ չէ թէ ինչ ցեղէ և կրօնէ լինի, փոյթ չէ թէ գոյնն սև կամ ճերմակ կամ կարմիր լինի, կը վայելէ քաղաքացւոյ ամէն իրաւունք և կը կատարէ ամէն պարտք ուրիշ ամենուն հաւասար. Ամէն ոք ազատ է խօսելու իւր ցեղին լեզուն, պաշտելու իւր Աստուածն ըստ իւր համոզման. Զուիցերիոյ ամէն մէկ քանթօնն եւ Միացելոց ամէն մէկ Նահանգն իրօք մէկ մէկ ինքնօրէն Տէրութիւններ են. Միացեալ Նահանգաց հողոյն վերայ եթէ նոր գաղթականութիւն մի հաստատուելով յընթացս ամաց այս ինչ ստուար թուոյն հասնի, Ուաշինկթընի դաշնակցական իշխանութիւնն կը թոյլ տայ ինքնօրէն Տէրութեան աստիճանն բարձրացունել այն գաղթականութիւնն, որ կը լինի Նահանգ մի և Նահանգաց հաւասար, կ՚ունենայ իւր խորհրդարան, օրէնսգիրք, ոստիկանութիւն առանձինն, և Ուաշինկթընի դաշնակցական վեհաժողովոյն մէջ իւր ներկայացուցիչներն. Բայց ինքնօրէն ըսել անկախ ըսել չէ. Այս Նահանգաց իւրաքանչիւրն թէև առանձին Տէրութիւն մ՚է, բայց ընաւ անկախ ինչ, արտաքին աշխարհավարութիւն չունի, օտարի հետ չկրնար նիզակակցիլ կամ դաշնագրել. Նահանգն իւր ներքին կեանքի վերաբերեալ բոլոր խնդրոց մէջ ինքնօրէն է և ինքնավար, բայց միջնահանգային և միջազգային ամենայն խնդրոց մէջ ինքն պարզ անդամ մ՚է Միացեալ Նահանգք կոչուած մեծագոյն քաղաքական մարմնոյն կամ ազգին.

Զուիցերիան և Միացեալ Նահանգք անհերքելի ապացոյցներ և կենդանի օրինակներ են հաստատելու թէ ազգային միութիւն և բարեկարգ կառավարութիւն կարելի են զանազան ցեղերու և լեզուներու խառնուրդ եղող երկրաց մէջ. Եւ այժմ Տաճկաստանն բարեկարգելու և զօրացնելու կամ Օսմանեան խնդրոյն լուծման լաւագոյն եղանակն ինքնին կը ներկայանայ մեր մտաց. Եւ պարտիմ աստ իբր միջանկեալ յաւելուլ սա անձնական համոզումս թէ Հայկական խնդրոյն լուծումն պարտիմք խնդրել Տաճկական խնդրոյն լուծման մէջ, վասն զի մեր Հայ հայրենակցաց դատն վճռական սերտ կապակցութիւն ունի Օսմանեան երկրին ընդհանուր հիւանդութեան հետ. Պարտիմք մեք հայ գործիչքս միաբանիլ Թուրք ազատասէր կամ բարեկարգական գործիչներու հետ և նկրտիլ Հայ ցեղին ազատութիւնն ձեռք բերել իբր Տաճկաստանի ազատութեան մէկ մասն, և հայաշատ գաւառաց բարեկարգ բարգաւաճումն իբր Օսմանեան պետութեան բարգաւաճման մէկ մասն. Այսպէս եթէ ընեմք, Հայ դատն իւր զօրութիւն չկորուսաներ, այլ մանաւանդ կը շահի ալ.

Չը կարծուի թէ այժմ կուգամք առաջարկել որ Տաճկաստանն ալ Զուիցերիոյ և Միացեալ Նահանգաց պէս Հանրապետութիւն լինի, քա՛ւ լիցի. Միայն կ՚ըսեմք թէ Տաճկաստանի վարչութիւնն կարի յոյժ միապետական է, կարի յոյժ կեդրոնացուցեալ է, և վասն որոյ ողբալի կերպիւ անյարմար է մեր բազմացեղ և բազմալեզու երկրին. Պէտք է որ կառավարութեան մէջ ազատական սկզբունք մտնեն, հանրապետական ինչ ինչ տարրեր խառնուին միապետութեան հետ. Կ՚ըսեմք թէ վեհապետին պարտ է մօտէն քննել և չափել իւր իշխանութեան ներքեւ գտնուող տարբեր ցեղերու կրթական, քաղաքակրթական աստիճանն, և անոնց իւրաքանչիւրի կառավարութիւնն յարմարցունել իրենց վիճակին. այնմ որ զգօն, խաղաղասէր և կրթասէր է, շնորհել ինքնօրինութիւն պատշաճ և ապահով աստիճանաւ. Հարկ չկայ Հայաստանն լիովին ինքնօրէն ընելու, որպէս Միացելոց մէկ մի Նահանգն է, այլ հարկ է հայոց Սահմանադրութեան տալ կարեւոր զարգացում մի և ընել հայ հասարակութիւնն աստիճան մը աւելի ինքնօրէն ուղղութեան մէջ.

Հարկ է նաև կարգել հայաշատ գաւառաց վերայ Եւրոպացի ուղղամիտ և կարող կառավարիչ մի. Սուլթանն Կ. Պոլսոյ մէջ կեդրոնացեալ Օսմանեան բանակին բարւոք կազմակերպութիւնն յանձնած է Եւրոպացի ձեռնհաս սպայից. Թող համոզուի Նորին Վեհափառութիւն թէ նոյնպէս և նոյնչափ հարկաւոր է որ գաւառաց բարւոք կազմակերպութեան և պաշտպանութեան գործն ժամանակի մի համար յանձնէ Եւրոպացի կարող ձեռքերու.

Հայէն յետոյ կարեւորագոյն Օսմանեան տարրն է Արաբն, և հարկ է որ Արաբիոյ ևս ինքնօրէնութեան փոքրիկ աստիճաններ շնորհուին ինչ ինչ անհաճոյ պատահականութեանց առջեւն առնլու համար.

Քուրդ տարրն անբաղդատելի կերպիւ ստորին է քան զԱրաբն, վասն զի ոչ միայն անկիրթ է այլ և անկրթելի. Բարբարոս կեանքի մէջ հազարաւոր տարիներէ ի վեր ապրած և կոշտացած է այդ ցեղ. Աշխարհի վերայ չկայ զօրութիւն մի որ զՔուրդն քաղաքակրթել կարենայ, վասն զի եթէ այդ ցեղն քաղաքակրթութեան թագուն ընդունակութիւն ունեցած իսկ լինի, դարեր պէտք են որպէս զի սերնդէ սերունդ աստիճանաբար զարգանայ անընդհատ դաստիարակութեան և ոչ ևս թափառայած կենցաղոյ ազդեցութեամբ. Սարսափելի սխալ է Քրդին զինուորական կամ քաղաքային ոև իցէ ծառայութիւն սպասել. 1877ին Քուրդ հեծելազօրք վնասակար եղան Օսմանեան բանակին և արատ անոր զինուորական պատւոյն որքան [illegible] հանդիսացան հայ գիւղօրէից. Բանակի մի զօրութիւնն չչափուիր միայն թուով, այլ բարոյական պայմանօք ևս, այսինքն կրթութեան, քաջութեան և հարգապահու-

թեան (discipline) աստիճաններումն։ Արդ, համարձակ կարելի է յայտարարել թէ Թուրքն հաւասարապէս զուրկ է այդ երեք բարոյական պայմաններէն, հետեւապէս անոնցմով կազմեալ գունդն, թէեւ բանակի չափ մեծ լինի, զինուորական արժէքէ զկնովին թափուր պիտի գտնուի — անուրիշ խնդիր է եթէ իբր աւազակաց հրոսակներ պաշտօն վարելու հրաւիրուին զինուորական դիմակի ներքեւ — ։ Պարտ է ուրեմն Թուրքերն զինաթափ ընել և քշել դէպ ի հարաւ, որպէս զի Հայք, որք իբրեւ զինուոր և վաճառական և մշակ և արհեստաւոր ամենայն յարմարութիւն ունին Սուլթանաց աջ բազուկն լինելու, զարգանան առանց բարբարոսաց կողմանէ նեղուելու։

Բարձրաձայն կը յայտարարեմք թէ Տաճկաստան չկրնար փրկուիլ կեդրոնացեալ կառավարութեամբ, Օսմանեան ժողովուրդք չեն կրնար խաղաղիլ բռնութեամբ, աքսորով և այլ աչարկու միջոցներով։ Ժողովուրդն գոհութեան զգացում չկրնար ունենալ գոհութեան թուղթ ստորագրելով։ Թէև արտասահմանի հայ և օտար ազատական թերթեր լռեցուցուին, տակաւին լռիկ բայց պերճախօս բողոքներ պիտի մնան Տաճկաստանի ամէն կողմն, այսինքն հարստահարեալք, տնտեսապէս կործանեալք, կողոպտեալ եկեղեցիք, որբացեալ որբանոցք, խափանեալ վարժարանք, ամայացեալ գիւղօրէք։ Թէև բռնի և սոսկացուցիչ միջոցներ բողոքոյ բոցերն չիջուցանեն, դառն դժգոհութեան կրակն պիտի մնայ ընդ մոխրով ամենուն սրտին մէջ, հարստահարեալ Հայուն ինչպէս հարստահարեալ Թիւրքին սրտին մէջ, հակառակ համոզմանն շնորհակալութեան թուղթ ստորագրող Հայ երեւելեաց ինչպէս նաև անվստահութեամբ և իմացական անպատուութեամբ արհամարհեալ Թուրք Նախարարաց սրտին մէջ։ Ո՛չ Թուրքն չկարէ կտրել Հայուն դատն; բռնութիւն չկարէ թաղել տկարին իրաւունքն, թնդանօթաց թնդիւնն չզօրէ լռեցնել հարստահարելոց հծծիւնն, բանակք չբաւեն յաղթել ճշմարտութեան։ Պէտք չէ երկնչիլ յեղափոխականներէ և ազատականներէ, այլ պարտ է երկնչիլ ի ճշմարտութենէ և յարդարութենէ։

Մեք այս յայտարարութիւն կ՚ընեմք ոչ իբրև պարզապէս անդամ այն Հայ հասարակութեան որ հինգ դարէ ի վեր Օսմանեան հպատակ է, այլ և իբրև Օսմանցի. և չեմք կարծեր թէ մշակեալ և հայրենասէր Թուրք մի անկէ շատ տարբեր բան կրնայ ըսել։ Յանուն արդարութեան և ճշմարտութեան և յօգուտ բովանդակ Օսմանեան պետութեան կ՚առաջարկեմք որ Սուլթան Համիտ Բ. հնչուն սկսի ազատական սկզբամբ և բարձր քաղաքականութեամբ գործել երկրին փրկութիւնն, յարգելով ամենայն հպատակ ցեղերու ընդունակութիւնները և ի վարչական գործակցութիւն հրաւիրելով այլ և այլ ցեղերն և դասերն ըստ աստիճանի իրենց յառաջադիմութեան։ Կ՚երդնում ես, ձեռն ի վերայ խղճի, թէ մեք Հայքս անկախ լինելու հետամուտ չեմք, այլ կը բաղձամք մեր Թուրք հայրենակցաց հետ մէկ ազգ լինիլ հաւասարութեան և ազատութեան հիմանց վերայ, և այն բացարձակ պայմանաւ որ մեր ցեղային ընդունակութիւնք յարգուին և Հայաստան ինքնօրինութեան ճամբուն մէջ հաստատուի։

Այս է, ըստ մեր խոնարհ համոզման, զՕսմանեան Պետութիւնն վերակազմելու և փրկելու լաւագոյն եղանակն. այսպիսի ազատական քաղաքականութեամբ է որ Սուլթան Ապտ—իւլ—Համիտ Բ. պիտի մարէ երկրին մէջ ամէն յեղափոխական միտում որ արդիւնք է անհանդուրժելի խստութեանց և անտանելի անիրաւութեանց, պիտի շահի իւր ցեղին և Իսլամ աշխարհի բոլոր լուսաւորեալ դասերուն ինչպէս նաև բովանդակ Եւրոպայի խորին ոգանչացումն, և արդարև պիտի հանդիսանայ Օսմանեան Սուլթանաց մեծագոյնն և քան զամենայն Վեհափառն։

ԶԷՅԹՈՒՆ ԱՌ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆՍ

Ի՛նչ յոյսերով անցեալ գարուն յուղուեցանք...։
Ժա՛մ է, քաջե՛ր, չշնչեցին մեզ ոմանք,
Եւ մեք զէն յուս՝ ի լեառն եղանք ապաստան.
Զի լեառն է մեր դաշնակից, սար՝ մեր վահան։
Ժա՛մ է, ե՛ղբարք, արժան ո՛ւրա, գոչեցինք,
Թափենք արիւն, թող փրկուի Հայրենիք։

Ընտիր ընտիրն Թուրք զօրաց մեզ դէմ եկան.
Հազարապետըն մռնչանդ ետ հրաման—
«Իսլա՛մ, զարկէ՛ք գեաւուր, կրակ չարունակ։»
Այլ մեք անահ քամահելով նոցա կրակ,
Ժա՛մ է, ժամ է, կրակենք, եղբարք, դոռացինք,
Կրակ չարունակ, թող փրկուի Հայրենիք։

Պատառեցաւ հազարապետն ընդ մեր դոռ,
Յօգըն կոչեց զվերջապահս իւր բոլոր.
Գնտակք գնդից անդադարափ տեղային...
Ի մեզ Հայկայ եռայ յայնժամ վեհ ոգին.
Այդպէ՞ս ո՛Թուրք, ըսինք, նետէք դուք հրացան,
Իսկ մեք այսպէս կռուիմք փրկել Հայաստան։

Առ ճակտիդ, Թուրք, ա՛ռ կառափիդ, ա՛ռ կրծքիդ,
Աջ ձեռքիդ առ, կռնակիդ առ, առ ոտքիդ,
Ինկի՛ր գլորէ՛, դո՛ւ եւ, դու եւ՛ս, է՛ տակի՛,
Կամ ուշ ի գլուխ՝ զկնընկեց լեալ յանձնուէ՛։
Այդպէս արժան չէ արձակել զհրացան,
Այսպէս պարտ է կռուիլ փրկել Հայաստան։

—Եւ անձնատուր զօրքն եղան։

Այլ մեր բաղձանք արիւն թափել չէր իզուր.
Մեր ձեռքն էր անդ կոտորել զօրքն հինգ հազար;
Բայց «Ոչ» ըսինք, «արձակել պարտ է գերին։»
Արձակեցինք. «Թուրք, մի մոռնար զայս, ըսինք,
Այնպէս զարնել՝ այսպէս ներել է արժան,
Տեսնէ՞ք ինչ պէս կռուիմք փրկել Հայաստան։»

—Եւ թշնամիքն ամչցան։

Արդ, Հա՛յ եղբարք, և ձեզ ասեմք, չեմք բաւական
Զերդ բարբարոս արիւն թափել վայրապար.
Խնդրեմք ըսէ՛ք, պատրա՞ստ էք դուք ի գործ մեծ.—
Այն յաղթութիւնք զոր կար արել Հայ միայն մեզ,

Պի՛տ ծառայեն հէք Հայրենեաց փրկութեան.
Ըսէ՛ք, ո՞րպէս պարտ է փրկել Հայաստան։

Սապէս, ըստ մեզ. պարտ է փրկել Հայաստան—
Թող բոլորիս գլուխ, սիրտ եւ քսակ միանան։
Հարուստ, աղքատ, ուսեալ, անուս, տանք աջ յաջ,
Որ իմաստուն լինիմք այն քան որքան քաջ.
Զգօն Ներսէսք քաջ Տիգրանաց միանան,
Այնպէս, Հայե՛ր, մրցինք փրկենք ՀԱՅԱՍՏԱՆ։

ԼԱՐԱՆՏԱՑԻ ԱԶՆՈՒԱԿԱՆ ՀԱՅ ԵՒ ՀԱՅՈՒՀԻ Ի ԺԶ. ԴԱՐՈՒ

(Արտատպեալ ի Սիսուանէն Հ. Ալիշանի)

Լարանտայ կամ Գառաման կոչուածն էր ժամանակաւ այժմու Ղոնեաի երկիրն, եւ մեր Ռուբինեանց օրով Հայոց իշխանութեան ներքեւ ինկած էաւ ժամանակ մի։ ԺԵ դարու մէջ այդ գաւառ ծանօթացաւ Եւրոպացւոց, մանաւանդ Վենետիկցւոց։ Վենետիկցի պատկերահան մի, Կեսար անուն, ԺԶ դարու վերջերն հաւաքած լինելով ազգայ տարազներն, նկարած է նաեւ վերի պատկերներն որք լարանտայի Հոյ ազնուականի եւ Հայուհւոյ պատկերն և տարազներն կը ներկայացնեն։

ԴԱՍ ՄԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐՋԻՆ ԱՆՑՔԵՐԷՆ

1890 Տարին տարօրինակ տարի մ'եղաւ մեր ազգին համար։ Հարիւրաւոր անմեղ Հայեր սպանուեցան կանոնաւոր զօրքերէ, և ևս բազումք տառապեցան բանտից մէջ կամ յաքսորի։ Զգօնամիտ Հայեր տաք գլուխ դարձան իտես գազանաբարոյ հարստահարչին իշխանավայել կենցաղավարութեանն յափունս Պոսֆորի, եւ արձանային անզգայութեամբ օժտեալք իսկ քսամնեցան յոտից ցգլուխ ի լուր կարնոյ ահաւոր կոտորածին։ Ամենուստ լսելի եղան զայրագին մռնչիւն կամ ողբագին կանչ ու կառանչ, եւ բովանդակ Հայ աշխարհն սարսռաց։ Մեծ էր զայրոյթն, եւ մեծամեծս գործելու պէտք զգացին ոմանք, և սկսան... մեծաբանելով։ Մեծ եռանդն լծակցեցաւ փոքրիկ ուժոյ եւ սպառեց զայն վայրկենական բոցավառութեամբ։ Զափանցեալ զրոյցներէ արտադրեալ արուեստական ջերմութեան մ'ազդեցութեամբ ինչ ինչ տրամադրութիւնք տարաժամ ծաղկեցան, եւ ծաղկունք, աւա՜ղ, թօթափեցան իշունչ բուռն փոթորկաց։ Ապա, թէ ի կ. Պոլիս թէ ի գաւառս Հայ ժողովուրդն ստրկային խորին խոնարհութեան մէջ ընկղմեցաւ երկաթէ ձեռաց անընդհատ եւ անողոք ճնշման ներքեւ։ Բան զամենայն յանդգնունք անգամ մեր հայրենակցաց ամիսներով հաչեցան եւ մաչեցան՝ ստիպուելով զսպել մինչև իրենց հառաչքն եւ սրտի ուժգին բաբախիւնն։

Եւ այժ մրանտարկելոց ոմանք կ'արձակուին, աքսորելոց ոմանք յետս կը կոչուին, յետս կոչուած արտօնութեանց ոմանք կը չնորհուին։ Երկաթ ձեռքն փոքր ինչ կը թուլացնէ իւր ճնշում տեսնելու համար թէ կեանք եւ շարժում մնացած է ճնշելոյն մէջ։

Ահաւանիկ համառօտ վերլուծութիւնն վերջին ազգային դիպաց.

Բայց այդ անցքերէ պատշաճավայել իրատուելու համար իդէպ կը թուի մեզ յայտնելու աստ զոր ինչ Կիլիկիայէն մուերմական թղթակցութիւնք կը ծանուցանեն մեզ անցեալ ամառ այն կողմեր տարածուած այլանդակ զրուցաց մասին։ Ոմանք հաւատացուցած են թէ Մարսելիայէն 4,000 լիրա յղուած է ի Զէյթուն, և մեր ևս անուն գործածած են աւելի վիթխարի չափազանցութեամբ, որպէս թէ մեք 25,000 զորքով այս կողմէն շարժած լինէինք երթալ յօգնութիւն Զէյթունի, զրոյց զոր անշուշտ 40—50 հոգիէ բաղկացեալ մեր զինավարժական ընկերութեան վերայ հիմնած են նոքա որք կը սիրեն վիպասանի ազատութեամբ պատմել իրողութիւններ։ Ժողովուրդն ո՞րքան քարձր համարում ունեցած պէտք է լինի արտասահմանի գաղթականութեանց վերայ՝ հաւատալու համար այդ զրուցաց։—Կ. Պոլսէն ևս մուերմական թղթակցութիւնք կը տեղակացուցանեն մեզ թէ անցեալ ամառ ոմն—հայրենասիրի ամէն արտաքին հաւաստիք ներկայացուցող ոմն—դրամ հաւաքած է ինքպատ Հայրենասիրական շարժմանց և զայն իւրացուցած է....

Ահաւանիկ լուրջ խորհրդածութեան նիւթ մի։ Ինչ՞ու քաջերու հաւատքն և դրամ տուողներու առա-

տաձեւնութիւնն այսպէս անխոհեմաբար գործածուին և մաշին. ինչո՞ւ զգօնամիտ և բանիբուն հայրենասիրաց գործունէութեան պտղաբերութիւնն. վտանգուի չափազանց եռանդուն և աճապարող գործիչներու յախուռն միջամտութեամբ։ Տուողներն այսուհետև աւելի ևս պիտի շուարին թէ ում տան իրենց լումաներն, չտուողներն աւելի համարձակօրէն պիտի գլանան իւրենց դրամներ, և քաջերն չպիտի գիտնան թէ որու ձայնին անսան։ Այս ամենայն բնական հետևանքն է մեր գործելու եղանակաց։ Իրարմէ անկախաբար գործող յանձնախմբեր, ընկերակցութիւններ և անհատներ կան (ի պղտորել ջուրց նորեր ևս երևան կ'ելնեն) և իւրաքանչիւրն ունի քաղաքականութիւն, ծրագիր, միջոցներ և քսակ իւրուրոյն։ Վերջին ազգային անցք ակներև կը ցուցնեն ամենայն յստակամիտ անկողմնակալ Հայրենասիրաց թէ քանի՛ ողբալի և վտանգաւոր է գործնական շարժմանց մասին ծրագրի և միութեան չգոյութիւնն։

Եթէ հայրենասիրական շարժումն ներկայ ընթացիւք շարունակէ, նորա պատմութիւնն պիտի բաղկանայ անկարգապահ եւ վիժեալ փորձերու շարքէ մի, եւ օր մ'ալ ահագին քաղաքական պատահար մի պիտի հանգչի մեր ազգային յոյսերու վերայ իբր անշարժելի տապանաքար։

Ո՛ Հայրենակիցք իմ Ռուսիոյ, Եւրոպայի, Եգիպտոսի, Հնդկաստանի, Պարսկաստանի եւ Ամերիկայի, առ ձեզ կ'արձակեմ իմ աղաչանաց ձայն, և կ'երդմնեցունեմ զձեզ յանուն մեր թշուառ Հայրենակցաց որ վերջ տալու համար այս անկարգապահ շարժմանց՝ կազմակերպել ձեռնարկէք կեդրոնական գաղթային մարմին մի, իբր արտասահմանի Ազգային ժողով, երեք կամ հինգ հոգիներէ բաղկացեալ եւ ձեր քուէիւք ընտրեալ (Տես Հայք թիւ 2) որ պաշտօն ունենայ վարել իմաստուն ծրագրի համաձայն զհայրենասիրական շարժումն։ Մի՛, որպէս ոմանք կը կրկնեն իբր միակ առարկութիւն, ասէք թէ այս խորհրդոյ իրագործումն յոյժ դժուարին է կամ մինչև իսկ անկարելի։ Չխաբուինք, մեր հայրենեաց փրկութեան մեծ եւ դժուարին գործն մեծ եւ դժուարին միջոցներով պիտի կատարուի։ Մեք Հայքս մինչ կը պարծիմք չորս հազար տարուան քաղաքակրթութեամբ, պարտիմք ոչ բարբարիկ անկարգապահութեամբ եւ տղայական նախանձոտութեամբք այլ գրութեան վերածեալ բարդ եւ իմաստուն միջոցներով գործել։

Եթէ Հայ գաղթական աշխարհն ինքզինք անընդունակ ցուցնէ կազմակերպուելու, այդ իսկ փաստ մի պիտի լինի ի ձեռս մեր հակառակորդաց թէ Հայն անընդունակ եւ անարժան է ինքնօրինութեան։ Կազմակերպուելու ընդունակութիւնն քաղաքակրթութեան ստուգագոյն փորձըն է։

«Հայք» անձամբ կը սպասէ խոհուն հայրենասիրաց գաղափարներն այս մասին իմանալ եւ հրատարակել։

ԶԻՆՈՒՈՐ ՊԱՏԱՆԻ

—Զինուոր պատանիդ Հայոց, ու՞ր կերթաս,

—Կերթամ մարտնչիլ Աստուծոյ համար
Եւ մեր հայրենեաց կրօնիցն վեհափառ,

—Օրհնեա՛լ ըլլայ զէնդ զինուոր պատանի։

—Զինուոր պատանիդ Հայոց, ու՞ր կերթաս

Կերթամ մարտնչիլ վասն արդարութեան
Եւ ժողովրդոց փաստին սրբազան
Վասն նուիրական իրաւանց մարդկան։

—Օրհնեալ ըլլայ զէնդ, զինուոր պատանի,

—Զինուոր պատանիդ Հայոց, ու՞ր կերթաս։

—Կերթամ մարտնչիլ անզգամ մարդոց դէմ
Որք խեղճ ժողովուրդն ճնշեն կեղեքեն։
Կ'երթամ աերանց դէմ ջնջել գերութիւն,
Բռնաւորաց դէմ՝ տալ ազատութիւն։

—Օրհնեալ ըլլայ զէնդ զինուոր պատանի,

—Զինուոր պատանիդ Հայոց, ու՞ր կերթաս։

—Կերթամ հարուածել բարբարոսն օտար
Զ'անէ՝ մեր երկիրն աւեր և աւար,
Կերթամ վերցունել հակեալ գլուխներ
Զօրացուցանել կթոտեալ ծունկեր։

—Օրհնեալ ըլլայ զէնդ, զինուոր պատանի,

—Զինուոր պատանիդ Հայոց, ու՞ր կերթաս։

—Կերթամ մարտնչիլ զի Հայեր անյոյս,
Որդւոց ծննդեան չանիծեն զլոյս.
Եւ ոչ մարք զայն օր յորում զառաջինն
Իւրեանց կուրծքի վրայ մանկիկն սեղմեցին։

Օրհնեալ ըլլայ զէնդ, զինուոր պատանի,

—Զինուոր պատանիդ Հայոց, ու՞ր կերթաս։

—Կերթամ մարտնչել, ժողովուրդ ամէն
Որ իւրեանց քրտանց պտուղն վայելեն։
Դուրրի ապառակ խեղճ, նօթի մանկանց
Որոց անողոք կ'ըսուի թէ չէք հաց։

—Օրհնեալ ըլլայ զէնդ, զինուոր պատանի։

—Զինուոր պատանիդ Հայոց, ու՞ր կերթաս։

—Կերթամ մարտնչիլ քակել ամրոցներ,
Որք իբրև պատուար բաժնեն այս ազգեր
Արգելք են սոցա որ գրկեն զիրեար
Միևնոյն սիրով սրտին իբր եղբայր։

—Օրհնեալ ըլլայ զէնդ, զինուոր պատանի։

—Զինուոր պատանիդ Հայոց, ու՞ր կերթաս։

Կերթամ մարտնչել. զի խօսք, խղճմտանք,
Խորհուրդ, զգացում, ընկերական կեանք,
Բռնութենէ զերծ և ազատ ըլլան։

—Օրհնեալ ըլլայ զէնդ զինուոր պատանի,

—Զինուոր պատանիդ Հայոց, ու՞ր կերթաս,

—Կերթամ մարտնչիլ, պահել ի յաւերժ

Ցերկնուստ պարգևեալ օրինաց անվերջ·
Զայն սէր հռչակեմ, զվեհն ախոյեան,
Եւ զարդարութիւն, իրաւանց պաշտպան։

—Օրհնեալ ըլլայ զէնդ, զինուոր պատանի·

—Զինուոր պատանիդ Հայոց, ո՞ր կերթաս·

—Կերթամ մարտնչել զ'ամէն արարած
Ճանչէ 'իրարմունս երկնից մի Աստուած
Եւ մի հայրենիս յերկրի ատ խոնարհ։

—Օրհնեալ ըլլան զէնք քո անպարտելի
Երի՛ս օրհնեալ, զինուո՛ր պատանի։

ԵԼԻՑԼ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ· ՍԱՐԳԻՍ·

(Նմանողութեամբ Լամբնէի)

ՋՈՒՐՆ ԻԲՐ ԴԱՐՄԱՆ

(Շարունակութիւն եւ Վերջ)

Ցոյժ փափուկ առողջական վիճակի մէջ գտնուող քառասնամեայ Տիկին մի, որ բնաւ չէր կրնար ցայտուածի տակալ, հետեւեալ եղանակաւ դարմանուեցաւ։ Ամէն առաւօտ, պաղ ջրոյ մէջ թաթախուած եւ քամուած մեծ սպիտակ սաւան մի կը տարածէին, Տիկինն վրան կ'ընկողմանէր եւ սաւանովն կը ծածկուէր։ Տասն և հինգ համրելու չափ կը մնայր այնպէս, և ապա սրբուելով կը հագուէր։ Իրր վեց շաբաթ այսպէս շարունակելով այնքան զօրացաւ կի, այն որ սանդուղ մի վեր ելնելու համար պարտէր մէկ կամ երկու անգամ հանգչիլ, կարող եղաւ երկար պտոյտներ ընելու և երեք սառդուղներ ելնելու առանց շատ յոգնութեան, ինչ որ գոհութեամբ և զարմանօք կը պատմէր Տիկինն։

Ջուրն այրածի դարման է։ Երբ այրածն փոքր տարածութիւն միայն ունի, սովորական դարմանք կը բաւեն· սակայն այն դիպպայ մէջ յորս այրածն խոր չէ բայց ընդարձակ է, պաղ բաղնիքն շատ ապդու դարման է, ընկղմամբ։ Այսու յաւն կ'ամոքի կամ կը փարատի անմիջապէս, շաբաւ շատ չգոյանար, գարափ քիչ կը պատահի և ապին թանձր չլինիր։

Թութքկամ թթախտ մէմ, մայասըլ) լաւ կը դարմանուին տաք ջրոյ գործածութեամբ ըստ հետեւեալ եղանակին։ Օրն երեք կամ չորս անգամ մանաւանդ արտաքնոց երթալէ անմիջապէս յետոյ պէտք է մեծկակ սպունգ մի թաթախել ջերմ ջրոյ մէջ և զայն դնել սրբանին դէմ։ Մի քանի վայրկեան յետոյ վերստին թաթախել սպունգն ջերմ ջրոյն մէջ և վերստին պնդել զայն տխտաւոր մասին դէմ· այնպէս հինգ կամ վեց անգամ կրկնել մինչև որ պտուկներն կամ թութք սկսին կսկծալ։ Ցայնժամ մեղմով կը ցամքեցնեն հիւանդ մասն, առանց սրբելու չփման։ կամ 24 ժամն վիճակն մեծապէս կը բարւոքի և մի քանի օրէն ուռեցքն, թութք, եռք, ցաւ խտխտուք երբեմն բոլորովին կը փարատին։

Վերջին ժամանակաց բժշկական նշանաւոր յառաջդիմութեանց մին է մարմնոյն «Ներքին լուացումն» որ տարբեր է ոչ միայն մորթին լուացումն այլ և ստամոքսի և աղեաց մաքրողական դարմանէն։ «Ներքին լուացումն» է մսերուն և արեան լուացքն, որով ինչ ինչ ծանր խտտեր յաջողապէս և արագօրէն կը դարմանուին։ Գործողութիւնն կը լինի ընդմարթեայ ներարկութեամբ (injection sous-cutanee) մաքուր ջրոյ, յորում քիչ մ'ալ աղ





կայ։ Ամէն մէկ անգամին 1,000 կրամ ջերմ ջուր կը ներարկուի մասնաւոր գործիքով մի, և այս կրնայ կրկնուիլ նոյն օրն երթէ պէտք լինի։ Ջուրն մորթի ներքևէն ծծուելով կը խառնուի արեան շրջանին և մարմնոյն բոլոր մասանց կը թափանցէ, օտար նիւթերն կը լուծէ, կ'սրնու և միզի միջոցաւ մարմնէն դուրս կարտաքսէ։ Այս դարման ազդու է հնտախտի (դոլէրայ) դէմ, յորում մարմնոյ ջուրերն յանչափս կը նուազին և արեան շրջանն դժուար կը յառաջանայ։ Նոյնպէս ազդու է թիֆոխտի և այլ ինչ ինչ խտտերու դէմ։ Բայց այսպիսի սխալից մէջ ջրոյ գործածութիւնն բժշկին անկ է։ Հիւանդայ, մանաւանդ ծանր

չերմերէ տաքացող հիւանդաց, ընտանիք մեծ յանցանք կը գործեն զլանալով պաղ տաքացուցին ջուր, որպէս երբեմն սովոր էին։ Ջուրն խմուելով աղ արեան կը խառնուի և թոյներն դուրս հանելու և տիտն բուժելու հզօրագոյն միջոցն է։

Այս յօդուած աւարտելէ առաջ պարտիմք սա կարեւոր կէտ յիշել թէ պաղ լոգանքն վտանգաւոր կրնայ լինել ծերոց, թոքախտ և սրտախտ ունեցողներու և կանանց ինչ ինչ փափուկ վիճակներու մէջ։

—Ն. Տ. վերի յօդուածոյ մէջ գործածուած պատկերներն կը ներկայացունեն ջրաբուժական այլ և այլ տեսարաններն այն բաղանեաց զոր Տր. Լէւոս կը վարէ Պրուքլինի մէջ։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷ

10 Փետր. 1891։

Բարեկամ, խոստովանիմք թէ մեք Հայքս պարտութիւն պարտութեան վրայ կրեցինք տարի մ'ի վեր ունեցող դէպքերու ընթացքին մէջ։ Գում Գափուի մեծաղղորդ ցոյցն ի՞նչ էր հապա։ Ցոյցն ինքնին շատ գովելի եղանակաւ չեղաւ, այն ուրիշ խնդիր, բայց նպատակն բարի էր, այն է անդիմադրելի կերպիւ ի հրաժարումն ստիպել այն Աշըգեան որ մեզ և օրինաւոր կերպիւ եղած բազմակրկնակ խնդրանաց դէմ դրած էր ցայնվայր՝ ուժգնապէս փարելով իւր աթոռոյ։ Ի՞նչ մեծ յաջողութեամբ ձեռք բերինք անոր հրաժարումն։ Այնքան մաշերն սուբինի հարուածներով. այնքան անմեղաց բանտարկութիւնն, այնքանից կեղեքմունք, այնքան հանրական արհաւիրք ի գաւառս և ի Մայրաքաղաքիս, այնքան երկար կազմալուծութիւնն ազգային կեդրոնական վարչութեան, բոլոր այս անարժանոյ անարժան Աշըգեանին պատճառաւ եղան։ եթէ նա ազգին կամքն յարգելով հրաժարած լինէր՝ առանց ժողովրդական ցոյցին սպասելու, այս աղէտներ չպիտի գային Ազգին գլխուն։

Այժմ տխրութեամբ կը հարցնեմք թէ ի՞նչ շահեցաւ ազգն այնքան աղէտներու մատնուելէն, հասա՞ւ իւր բաղձանաց։ դժբաղդաբար և ոչ իսկ կրցաւ Աշըգեանի հրաժարն անդառնալի տեսնելու միխիթարութիւնն ունենալ։ Երեսն ամբացուած, որպէս թէ Սուլթանին հրամանին հնազանդելով, ելաւ նորէն Պատրիարքական աթոռն բազմեցաւ, իւր ժողովրդեան արեան հետքերուն վրայ կոխելով, իւր ազգին կամքին հակառակ՝ բազմեցաւ, բազմեցաւ ամօթահար ընելով Հայ ազգն, ծաղրելով և արհամարհելով զնա, և ծաղրելի ու արհամարհելի ընելով զնա յաչս մեր Ցոյն դրացեաց, որք ամենայն իրաւամբ կը պարծին իրենց քաջասիրտ Պատրիարքին վրայ։ Ո՛ Աշըգեան, դու դրացի էիր Ամեն. Դիոնիսիոսին ի Մաքրիգիւղ, ինչո՞ւ չօգտուեցար Նորա գիւղացնովայել օրինակէն։ Եւ ինչո՞ւ այժմ չես չիկներ տեսնելով թէ իւր յաղթութիւն վեհանձնօրէն ձեռք բերելէ յետոյ երբ առաջին անգամ յեկեղեցի գնաց՝ ո՛րպիսի ջերմ համակրութեան հրապարակային փոյլուն ցոյցերու արժանացաւ նա, մինչ ոստիկան զինուորներ ստիպուած էին զքեզ պաշտպանել քո ժողովրդեան զայրոյթի ցոյցերէն յորժամ դու վերադարձար յաթոռ Պատրիարքարան։ Չկարծես թէ ութսուն կամ հարիւր բանտարկելոց արձակումն զքեզ կրքուէ, թէև բոլոր բանտարկեալք արձակուին, թէև բոլոր աքսորեալք վերադարձուին, թէև Պէրլինեան Դաշնագրոց Հայկական Յօդուածն գործադրուի, քո վատ անսասանութիւնդ ընդդէմ ազգային կամաց չկրնար քաւուիլ։ Գիտցիր թէ Ազգն պատրաստ է թքնելու այն ազատութեան վրայ որ վատութեամբ ձեռք կը բերուի։ Ձե՞ս հասկնար ինչու Կրօնական Ժողովոյ անդամք այս երեք անգամ է իրարու վրայ միահամուռ բացակայ կը գտնուին նստերէն։ Երկրպագութիւնն ալ մեռեալ մի կարծեր։ Եթէ չփութաս հրաժարիլ, Գում Գափուի դէպքն Նոեմբերեան դէպքով մի պիտի կործանիս, և Հայ Պատմութիւնն սեաւ սեաւ տառերով պիտի դրոշմէ քո անուն Մեհրուժանայ և Վասա Սարգսայ ցանկին մէջ,

ԱՆԵՐԵՒՈՅԹՆ

ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ ՎԱՅՐԱԳՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՅՐԱԳՈՒԹԻՒՆՔ

Այս է խորագիրն ընտիր յօդուածին զոր Ֆիլատելֆիոյ Բիւլէթըըր ամսաթերթին Փետր. ի թուոյն մէջ կը գտնեմք դարձեալ Տիար Ռօպէրդ Սթայնի հմուտ գրչէն, և կը ծանուցանեմք զայն մեր ընթերցողաց հետեւեալ համառօտութեամբ։

1875-77ի Պուլկարական արհաւիրքն կրնան յերիս բաժնուիլ. ապստամբութիւն, զսպումն և փոխարինութիւն։ 1875ին ծագեցաւ ապստամբութիւնն. և յայնժամ տարօրինակ բան մի պատահեցաւ — Թուրք կառավարութիւնն ինքն առաջարկեց որ Եւրոպեան Տէրութեանց միացեալ հսկողութեան տակ կարգն վերահաստատուի։ Անգլիա առոր դէմ առարկութիւն յարոյց և Պուլկարիոյ խաղաղացումն Թուրք զօրաց թողուեցաւ, որով ԺԹ Դարու վերջին քառորդի մուտքն կատարուեցաւ այնպիսի տեսարանօք որոց լոկ պատմութիւնն միշտ ահաւոր պիտի լինի աշխարհի։ Երբ Ռուսն միջամտելով զԹուրքն գետին տապալեց, Պուլկարն խստիւ լուծեց իւր վրէժ իւր հինգդարեան հարստահարչէն։

Այս ամենուն առջեն դիւրաւ կրնար առնուիլ Եթէ Անգլիան իւր վերատեսչութեան ներքեւ բարեկարգութիւններ կատարել տուած լինէր քրիստոնեայ գաւառաց մէջ՝ յետ Ղրիմի պատերազմին, եթէ տուած լինէր արեւելեան քրիստոնէից գոնէ պատառիկ մի այն ինքնավարութենէն որ Անգլիոյ պարծանքն է։

Հայք կը սկսին ապստամբիլ, և լսուելի պատճառ ունին եթէ Էրզրումի Անգլիական հիւպատոսն իրաւ է։ Գիտել պարտ է թէ, ոչ հանգոյն Պուլկարաց որք հազար տարի յառաջ ինքնիշխան բարբարոս էին, Հայք հինգ վեց հազար տարիէ ի վեր մշակեալ ցեղ մ'են, եւ երբ զէն իձեռին ոտքի ելնեն, անշուշտ առաջնորդներ պիտի ունենան, որք բազմադարեան մտաւոր գործունէա-

թեամբ զարգացեալ իմացականութեան մի բոլոր նրբամտութեամբ պիտի վարուին պատերազմի ասպարիզին վերայ։

Բայց Հայոց ազատամարտութիւնն անօգնական չպիտի մնայ, Ռուսն նորէն պիտի մէջ մտնէ. և Հայաստան պիտի դառնայ Ռուսական գաւառ մի։ Եւ երբ Ռուսական մարտաձիոյն սմբակն միանգամ դպչի Միջերկրականի ալեաց՝ անդամալուծիչ սարսուռ մի պիտի ընթանայ ընդ բովանդակ Պետութիւնն Բրիտանական։

Ինչ՞ պարտ է ուրեմն այժմ ընել։—Հայաստանի տալ Եւրոպացի կառավարիչ մի։ Պէտք է որ Հայաստան վերածնի։ Առ սեմօք Եւրոպայի տարածուող երկիր մի, անհուն հանքային հարստութեամբ և այնպիսի բնակչօք որ Եւրոպացւոց մորթն, ձիրքն, ուսումնասիրութիւնն կրօնն և ամէն բանն ունին բայց յանուանէն, այսպիսի երկիր մի չկրնար աւելի երկար ժամանակ մնալ այր աւազակաց։ Անգղիոյ պարտքն է մանաւորապէս աշխատիլ որ Հայաստան վերածնի առանց արիւնհեղութեան, վասն զի Անգղիոյ պատճառաւ է որ Հայաստան տակաւին Տաճկական է, Փոխան յոյլ և յոյր Տաճիկ Փաշայի, որ ուրիշ ճոդ չունի բայց միայն եւ առաւել յոյր լինել, թող յղուի Անգղիացի պաշտօնակալ մի, լիուլի քաղաքային զօրութեամբ։

ԹԵԼԱԴՐԵԱԼ ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆ

Գիշերային լռութեան մէջ մենութիւնն ունէի ինձ մի ակ ընկեր։ Այժմ ունիմ նաև «Հայք»ն որոյ ամենայնորհալի սճն ինձի այնքան հաճոյք կուտայ որքան իմաստուն քաղաքականութիւնն և խորհուրդներն՝ չինութիւն մաքիս։ Այնինչ մի գինի մէջս կ'ընթեռնուի անոր 3 րդ թուոյն պարունակութիւնն, տեսայ նաև յոյժ կարեւոր մի խնդիր որ մեր երիտասարդաց անհրաժեշտ պիտոյից կը համապատասխանէ։ Որպէս զի ցոյց տամք թէ որքան կարեւորութիւն ունի արուեստանոցի խնդիրն, զոր կը յարուցանէ մեր թղթակիցն, պարտ է մեր հայրենակցաց ուշ դրաւել սա յաւալի իրողութեան թէ աշխատութեան որ ասպիսանի մէջ կը գտնուի մեր մեծամասնութիւնք գժբաղդաբար։

Աշխատութիւն, ըստ քաղաքական տնտեսութեան, կը բաժնուի յերիս, Ստորին, Միջին և Բարձր։ Ստորին աշխատութիւնն լոկ բազկաց կենդանական զօրութիւնն է առանց ուղեղի միջամտութեան։ Միջին աշխատութիւնն մասամբ ուղեղի և մասամբ բազկաց համաձայն գործակցութիւնն, հայագործք, երկաթագործք, և նմանք են այս կարգին օրինակք։ Իսկ բարձր աշխատութիւնն այն է յորում մարդ լիովին ուղեղի իմացականութեամբ կը զբաղի, ինչպէս բժիշկք, ուսուցչապետք և այլն։ Արդ, սիրելի հայրենակիցք իմ, վերոյիշեալ բաժանմանց որո՞ն մէջ կը գտնուի մեր մեծամասնութիւնն։ Ո՞չ ապաքէն կը հաշիւք և կը մաշիմք գործարաններու ստորին խաւերուն մէջ։ Գործաւորաց այս ստորին դասուն մէջ չկ՞ան միթէ այնպիսիք որք «հին երկիրը» իւրեանց ծաղիկ հասակ գոլէ ճներու մէջ անցուցած, գիտութեանց և լեզուաց, և անգղիերէնի ալ մասնաւոր տեղեկութիւն ստացած լինելէ յետոյ կը դիմեն ինքնուրոյն Աշխարհ, և առաջին պատեհիւ գործարանաց անողորմ գթոյն կ'աղերսեն, որպէս զի անապրելի մի ապրուստ հայթայթեն։ Եթէ թելադրեալ գործարանն հաստատուի, այսպիսի երիտասարդք կրնան անոր շնորհիւ լաւագոյն դրից հասնիլ։ «Հայք»ի թանկագին էջեր չեն ներեր մեզ երկարաբանել։ Նոքա որք մեծութեան մանանեխի փոքրիկ հատիկն կը կրեն յինքեանս անմիջապէս պիտի զգան այսպիսի կենցաղոյս մի հաստատութեան օգուտն։ Կը խնդրեմ որ, եթէ պատշաճ կը սեպուի, այս խնդրոյն ուսումնասիրութեամբ զբաղող Նիւ-Եորքի Յանձնախումբն ուշաջոնական գրութիւններ ուղղէ արտաքոյ Նիւ Եորքի եղող Միութեանց գլխաւորներուն և անոնց ալ աջակցութիւնն ընդունի։

Եթէ յիշեալ հաստատութեան իրագործումն կարելի դառնայ, ես հոգւոյս անկեղծ յուժարութեամբ մէն մի տարի, մինչև չորս տարի, երկու շաբաթուան համեստ հատոյթս կը խոստանամ նոյն հաստատութեան յատկացուցանել, եթէ մեր այլ հայրենակիցք ըստ թելադրութեան մէկ մէկ թալէր չնորհեն։

Միննիափոլիս։ Աւագ Ս. Գարատի։

Ամենուս սիրելի Պարոն.

Մեր քաղցր Հայրենեաց «Հայք» անունը կրող թերթերնիդ խիստ գոհ կը նէ զմեզ։ Նաև ուրախ եղանք փետրվար 1 թիւ մեջ Տիար Պօղոս Յակոբեանի կողմն Ամերիկայի գաղթականութեան համար գրած մէկ խրատականէն, որ արուեստանոցներու պէտքը անհրաժեշտ ըլլալը կը ծանուցանէ։

Այո՛ ազգ ամիսս անձանց վերջին ճանքերնին է, ոչ թէ քաղաքիդ գաղթականութեան, այլ բոլոր աշխարհի երջանկութեան համար այս հետեւեալ երեքն հիմն է։

Այսինքն քրիստոնէական կրօնի և Աստուածպաշտութեան քարոզները նախակրթարաններէ ըսկսէ՝ ոչ թէ թափառիկ քարոզիչներէ։

Օրէնք և քաղաքականութիւն ուսանել դպրոցներէ, ոչ թէ շուկայի փաստաբաններէ։

Նոյնպէս արհեստ և աշխարհագիտութիւն ստորեալ արուեստանոցներէ, ոչ թէ ֆապրիքներու գործատէրներէ։

Մնամ ձերդ

Մանչեսդր Փեբր. 14, 1861 Սէր

LANTELM'S
Hotel and Restaurant,
10 UNION SQUARE, New York City
6 րդ և 17 րդ փողոցաց միջև, արեւելեան կողմն։
Նախաճաշ 40ական ճաշ 75 սենթ խոհարարութիւն գաղիական։

PHARMACIE FRANÇAISE,
NORBERT FRANCK
331 7th Avenue, NEW YORK
Դեղագիրք կը պատրաստուին Լնամ։

H Eguinian,
BOOK AND JOB PRINTER
100 Centre St, New York City

---

1 Ստորագրեալն այժմ պահապանութեամբ կը գրագրի։